Կարգապահական գործ թիվ ԿԳ-23004

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԱԲԳԱՐ ԲՈՐԻՍԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Կարինե Բաղդասարյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Հունան Բաբայանի, Հայկ Սահակյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Աբգար Պողոսյանի

քննության առնելով փաստաբան Աբգար Բորիսի Պողոսյանի **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 3015), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Գայանե Վարդևան **(այսուհետ նաև՝ Դիմող),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ նաև՝ Պալատ),** հայտնել է, որ փաստաբան Աբգար Պողոսյանի հետ 11.03.2022թ. կնքել է պայմանագիր, որի համաձայն՝ փաստաբանը պետք է նախաքննության փուլում ապահովեր իրավական աջակցություն Դիմողի հոր մահվան հետ կապված, այդ թվում ներկայացներ հանցագործության մասին հաղորդում, ինչպես նաև վճարեր պայմանագրի գումարը:

Դիմողը հայտնել է, որ բազմաթիվ փաստեր է տրամադրել փաստաբան Աբգար Պողոսյանին: Դիմողի պնդմամբ, ինքը պայմանավորվել է փաստաբանի հետ, որ հաղորդումը Շիրակի մարզի դատախազություն ներկայացնելուց առաջ դրա տեքստը համաձայնեցվի իր հետ, սակայն փաստաբանը առանց համաձայնեցման ուղարկել է հաղորդումը, առանց տեղեկացնելու, թե որ օրն է այն ուղարկել՝ պատճառաբանելով, որ ամբողջ գործը կկազմվի, իսկ այնուհետև կուղարկվի Դիմողին, ինչին վերջինս դեմ է եղել:

Դիմողը հայտնել է, որ փաստաբանի կողմից դատախազություն ներկայացված հաղորդման կրկնօրինակը իրեն ուղարկվել է թերի, ինչը փաստաբանը պետք է լրացներ հետագայում: Դիմողը նշել է, որ փաստաբանի կողմից ներկայացված բողոքը մերժվել է «հանցակազմի բացակայության», ինչպես նաև այն պատճառով, որ փաստաբանը չի ներկայացրել որևիցե ապացույց:

Դիմողի պնդմամբ, նշված որոշումը բողոքարկելու մասին փաստաթուղթը ևս ներկայացվել է թերի, ինչի պատճառով մերժվել է դատախազի կողմից:

Դիմողի հավելել է, որ տրամադրել է գործի լուծման համար կարևոր նշանակություն ունեցող փաստաթղթերը և պնդել է, որ փաստաբանը դրանք անպայման ներկայացնի, սակայն փաստաբանը ի պատասխան դրա պատճառաբանել է, որ բողոքը կմերժեն:

Ըստ Դիմողի՝ փաստաբան Աբգար Պողոսյանի կողմից դատախազին ուղղված բողոքի մեջ քննարկման առարկա չեն դարձվել իրեն տրամադրված փաստաթղթերը, ինչպես նաև հետաքննիչի որոշումը, որի մեջ նույնպես նկարագրված է ընտանեկան բժիշկի կատարած արարքը, այն պատճառաբանությամբ, որ նշված հարցերը կքննարկվեն դատարանում դատական նիստով և բողոքն ուղարկել է Գյումրու Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, սակայն Դիմողին չի հայտնել այն մասին, թե երբ է նիստ լինելու, ինչպես նաև չի պատասխանել վերջինիս զանգերին:

Դիմողը նաև հավելել է, որ փաստաբան Աբգար Պողոսյանի բողոքը մերժելու մասին Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը ստանալուց հետո, պարզել է, որ կարևոր փաստաթուղթը՝ բժշկի սխալի վերաբերյալ, Աբգար Պողոսյանը դարձյալ չի ներկայացրել:

Դիմողը նաև նշել է, որ ՀՀ վերաքննիչ դատարանը բողոքը ևս մերժել է, որովհետև բողոքը հիմնավորող փաստեր չեն տրամադրվել, ինչից հետո վերջին անգամ կապնվել է փաստաբանի հետ 05.12.22թ-ին, երբ քննարկել է նրա հետ վճռաբեկ բողոք ներկայացնելու հարցը: Նշվածից հետո, Դիմողի պնդմամբ, ինքը դատախազությունից տեղեկացել է այն մասին, որ փաստաբանը Վճռաբեկ դատարան բողոք չի ներկայացրել:

Դիմողը 2023 թվականի հունվարի 12-ին (№ 48-23) և հունվարի 16-ին (№ 65-23) Պալատին հասցեագրված գրություններին կից ներկայացրել է փաստաթղթեր՝ հավելելով, որ դրանք ևս տրամադրել է փաստաբան Աբգար Պողոսյանին համապատասխան գործողությունները իրականացնելու համար, իսկ Պալատին հասցեագրված 2023 թվականի հունվարի 24-ի (№ 171-23) գրությանը կից ներկայացրել է փաստաբան Աբգար

Պողոսյանին ուղարկված գրությունը, որով նրանից պահանջել է վերադարձնել վճարված գումարը:

Նշվածի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Աբգար Բորիսի Պողոսյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան)** առաջարկվել է ներկայացնել բացատրություն Գայանե Վարդոևայի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 2023 թվականի հունվարի 23-ին ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ Դիմողի կողմից ներկայացված հանգամանքները մեծամասամբ չեն համապատասխանում իրականությանը, իսկ մնացած մասով բացակայում են կարգապահական վարույթ հարուցելու հիմքերը:

Փաստաբանը նշել է, որ Դիմողի կողմից նշված հանգամանքների շուրջ հաղորդում է ներկայացրել ՀՀ Շիրակի Մարզի դատախազություն, ըստ էության ապահովել է պատշաճ իրավաբանական խորհրդատվություն և իր լիազորությունների սահմաններում աջակցել է Դիմողին անհրաժեշտ հարցերի պարզման համար:

Փաստաբանը հավելել է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը ինքը բողոքարկել է, իսկ դատական ստուգում անցնելուց հետո հիշյալ որոշումը մտել է օրինական ուժի մեջ: Փաստաբանի պնդմամբ, նշվածի ընթացքում Դիմողի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկվել են թե Փաստաբանի կողմից բերված բողոքները թե պատասխան որոշումները:

Փաստաբանը նաև նշել է, որ Դիմողի գործով չկա որևէ կարևոր հանգամանք, որն իր կողմից չի ներկայացվել: Ըստ Փաստաբանի, դիմումի մի մասն ըստ էության վերաբերում է փաստաբանի ստանձնած գործով մատուցված ծառայությունների արդյունքից վստահորդի դժգոհությանը, որի համար փաստաբանը պատասխանատվություն չի կրում և չի կարող/իրավունք չունի որևէ դեպքում կանխատեսել, երաշխավորել կամ ապահովել դրական արդյունք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Փաստաբանը խնդրել է մերժել կարգապահական վարույթի հարուցումը:

3. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 27.01.2023թ. թիվ 31-Ա/ԿԳ-23004 որոշմամբ փաստաբան Աբգար Բորիսի Պողոսյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Կանոնագիրք**) 2.7.2, 3.5.5, 3.6.1 և 3.8.4 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

02.02.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը խորհրդին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 31.03.2023թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված է համարվել Պատասխանողի կողմից ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 14.10.2022թ. որոշումը բողոքարկելու համար սահմանված 15-օրյա ժամկետը բաց թողելու փաստը, Պատասխանողի կողմից 2022թ. նոյեմբերից հունվար ամիսների ընթացքում Դիմողի հաղորդագրություններին և զանգերին չպատասխանելու փաստը, Պատասխանողի կողմից պայմանագրով ստացած հոնորարի մի մասը Դիմողին չվերադարձնելու փաստը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 31.03.2023թ.:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել 13.04.2023թ. ժամը 18:30-ին և 20.04.2023թ. ժամը 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

– Փաստաբան Աբգար Պողոսյանը ստանձնել է Դիմող Գայանե Վարդոևայի իրավունքների ու շահերի պաշտպանությունը, մասնավորապես՝ պետք է նախաքննության փուլում ապահովեր իրավական աջակցություն Գայանե Վարդոևայի հոր մահվան հետ կապված, այդ թվում՝ ներկայացներ հանցագործության մասին հաղորդում: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի և Դիմողի միջև 11.03.2022թ. կնքված թիվ-156 ծառայությունների մատուցման պայմանագրի պատճենով:*

– Փաստաբան Աբգար Պողոսյանը 2022թ. նոյեմբերից հունվար ամիսների ընթացքում Դիմող Գայանե Վարդոևայի հաղորդագրություններին և զանգերին չի պատասխանել: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի ներկայացրած «Viber» և «Messenger» հավելվածներում առկա Դիմողի և Փաստաբանի միջև հաղորդագրությունների պատճենով:*

– Փաստաբան Աբգար Պողոսյանի և Դիմող Գայանե Վարդոևայի միջև 11.03.2022թ.

կնքված թիվ-156 ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծվել է: *Սույն փաստը հաստատվում է նշված պայմանագրի 7.2 կետով, որի համաձայն այն դադարում է 1.2 կետով սահմանված ծառայությունները մատուցելուց հետո*:

– Դիմող Գայանե Վարդևան 23.01.2023թ. գրությամբ Փաստաբան Աբգար Պողոսյանից պահանջել է ամբողջությամբ վերադարձնել 11.03.2022թ. կնքված թիվ-156 ծառայությունների մատուցման պայմանագրով վճարված գումարը, սակայն Փաստաբանը չի վերադարձրել պայմանագրով ստացած հոնորարի մի մասը: *Սույն փաստը չի հերքվել Փաստաբանի կողմից:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Աբգաը Պողոսյանը փաստաբան է հանդիսանում 26.06.2021 թվականից, և սույն տեղեկանքը տրամադրելու օրվա դրությամբ Փաստաբանը չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Աբգար Պողոսյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.6.1 և 3.8.4 ենթակետերի խախտման համար, իսկ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցած վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Անդրադառնալով Կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտման հատկանիշներով կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերին և հիմնավորումներին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Դիմողի և Փաստաբանի միջև 11.03.2022 թվականին կնքված թիվ-156 ծառայությունների մատուցման պայմանագրի 2.1.5 ենթակետով սահմանվել է, որ Փաստաբանը Դիմողին պարբերաբար, սակայն ոչ ուշ քան շաբաթը մեկ անգամ, պարտավոր է տեղեկացնել ծառայությունների մատուցման ընթացքի մասին:

Տվյալ դեպքում, կարգապահական գործի նյութերից հետևում է, որ 2022 թվականի նոյեմբեր ամսից մինչև 2023 թվականի հունվար ամիսը կողմերի միջև կնքված պայմանագիրը լուծված չի եղել, ուստի Փաստաբանը պարտավորություն է ունեցել շաբաթը մեկ անգամ Դիմողին տեղեկություն տրամադրել ծառայությունների մատուցման ընթացքի մասին, ինչը վերջինիս կողմից չի կատարվել, որը նաև հաստատվել է Փաստաբանի կողմից Հանձնաժողովի նիստի ժամանակ:

Անդրադառնալով Կանոնագրքի 3.8.4 ենթակետի խախտման հատկանիշներով կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերին և հիմնավորումներին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Կանոնագրքի 3.8.4 ենթակետի համաձայն՝ *Պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝*

1) վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ.

Վերոգրյալ նորմից հետևում է, որ եթե պայմանագիրը լուծելիս որոշակի գործողություններ փաստացի չեն կատարվել՝ ապա փաստաբանը պարտավոր է միջոցներ ձեռնարկել այդ մասով հոնորարը վերադարձնելու ուղղությամբ:

Սույն գործի փաստերից հետևում է, որ Դիմողի և Փաստաբանի միջև 11.03.2022 թվականին կնքվել է թիվ-156 ծառայությունների մատուցման պայմանագիրը, որով Կատարողը (Փաստաբանը) պարտավորվել է՝ ներկայացնել հանցագործության մասին հաղորդում և ապահովել Պատվիրատուի (Դիմողի) շահերը նախաքննության փուլում:

Փաստաբանը Պատվիրատուի շահերը չի ներկայացրել նախաքննության փուլում, այսինքն՝ այդ մասով որևէ աշխատանք չի կատարվել Փաստաբանի կողմից՝ հաշվի առնելով, որ քրեական վարույթի հարուցումը մերժվել է: Ուստի, Փաստաբանը կրում էր պարտավորություն Դիմողին վերադարձնելու հոնորարի մի մասը, սակայն Փաստաբանը հոնորարի որևէ մաս չի վերադարձրել Դիմողին:

Նման պայմաններում Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանի գործողությունները չեն բխել Կանոնագրքի 3.8.4 ենթակետի պահանջներից:

Անդրադառնալով Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման հատկանիշներով Փաստաբանին վերագրվող արարքին, Հանձնաժողովը գալիս է հետևյալ եզրահանգման.

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում*:

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Տվյալ դեպքում կարգապահական գործի նյութերից, այդ թվում՝ Դիմողի կողմից ներկայացված դիմումի փաստական հիմքերից հետևում է, որ Փաստաբանի վարքագծում հնարավոր անբարեխղճության առկայությունը պայմանավորված է Փաստաբանի կողմից վճռաբեկ բողոք ներկայացնելու ժամկետը բաց թողնելու հանգամանքով, որպիսի պայմաններում Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նշվածը դիտարկել կողմերի միջև կնքված պայմանագրի առարկայի լույսի ներքո:

Այսպես, Դիմողի և Փաստաբանի միջև 11.03.2022 թվականին կնքվել է թիվ-156 ծառայությունների մատուցման պայմանագիրը, որի 1.2 ենթակետով կողմերը նախատեսել են իրավաբանական բնույթի ծառայությունների ծավալը, այսինքն՝ պայմանագրի առարկան, դրանք են՝ Կատարողը (Փաստաբանը) պարտավորվել է՝

ա. ներկայացնել հանցագործության մասին հաղորդում,

բ. ապահովել Պատվիրատուի (Դիմողի) շահերը նախաքննության փուլում:

Գործի նյութերով, մասնավորապես՝ 21.04.2022 թվականի գրությամբ, հաստատված է համարվում այն հանգամանքը, որ Փաստաբանի կողմից Շիրակի մարզի դատախազին է հասցեագրվել հանցագործության վերաբերյալ հաղորդում, այսինքն՝ այս առումով անվիճելի է, որ իրավաբանական բնույթի ծառայություններ բովանդակող հանցագործության վերաբերյալ հաղորդում ներկայացնելու պայմանագրային պարտավորությունը Փաստաբանի կողմից պատշաճ կատարվել է:

Միաժամանակ գործի նյութերից հետևում է, որ ներկայացված հաղորդման հիման վրա քրեական գործի հարուցումը մերժվել է:

Դիմողի կողմից ներկայացված բողոքը վերաբերում է քրեական գործի հարուցումը մերժելու որոշման դեմ Փաստաբանի դրսևորած վարքագծին, ուստի այս առումով Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական նշանակություն ունեցող հարցադրմանը՝

- Արդյո՞ք Փաստաբանն ունեցել է պայմանագրով նախատեսված պարտավորություն՝ բողոքարկելու քրեական գործի հարուցումը մերժելու որոշումը:

Կողմերի միջև կնքված պայմանագիրը, ըստ էության, հանդիսանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ գլխով նախատեսված պայմանագրի տեսակ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 777-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով՝ կատարողը պարտավորվում է պատվիրատուի առաջադրանքով ծառայություններ մատուցել (**կատարել որոշակի***

գործողություններ *կամ իրականացնել որոշակի գործունեություն), իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:*

Վերոգրյալ իրավանորմից բխում է, որ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի առարկան (կատարվելիք գործողությունները) պետք է ձևակերպված լինի որոշակի, ինչն ուղղակիորեն հնարավորություն կտա պարզելու կատարվելիք գործողությունների ծավալը:

Կողմերի միջև կնքված թիվ 156 պայմանագրի 1.2 կետում սահմանված ծառայությունների բովանդակությունից հետևում է, որ Կատարողը պարտավորվել է, ի թիվս այլնի, ներկայացնել հանցագործության վերաբերյալ հաղորդում, ինչից ակնհայտ է, որ պայմանագրի առարկան, որպես պայմանագրի էական պայման, այս առումով ձևակերպված է որոշակի, իսկ ներկայացված հաղորդման արդյունքում կայացված և Դիմողի սպասելիքները չբավարարող որոշումների նկատմամբ Փաստաբանի կողմից դրսևորվող հնարավոր դատավարական գործողությունների կատարումը նկարագրված կամ նախատեսված չեն պայմանագրի առարկայում, ընդ որում՝ գործի նյութերով չի հաստատվել նաև պայմանագրի առարկան փոփոխված լինելու փաստը: Այս առումով հատկանշական է, որ պայմանագրի առարկան, այս դեպքում՝ մատուցվելիք ծառայությունը (գործողությունը), ձևակերպված է որոշակի և այն չի ներառում հաղորդման արդյունքների նկատմամբ Փաստաբանի կողմից որոշակի վարքագիծ դրսևորելու պարտավորություն: Նման մեկնաբանությունը բխում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 777-րդ հոդվածի առաջին մասում տեղ գտած «որոշակի գործողություններ» եզրույթից, այսինքն՝ պայմանագրի առարկան պետք է բովանդակի կատարվելիք գործողությունների **որոշակի շարադրանք**:

Վերոգրյալի հաշվառմամբ Հանձնաժողովը եզրահանգում է, որ պայմանագրի առարկայի որոշակի ձևակերպված լինելու պայմաններում անվիճելի է դառնում Փաստաբանի կողմից ծառայությունների ծավալը բովանդակող՝ հաղորդում ներկայացնելու պարտավորության պատշաճ կատարված լինելը, ավելին՝ Փաստաբանը նախաձեռնել է պայմանագրով չնախատեսված գործողությունների կատարում, այդ թվում՝ բողոքարկել է քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերադասության կարգով, այնուհետև ներկայացրել է բողոքներ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան և ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, որպիսի գործողություններով, նաև, Փաստաբանի կողմից հաղթահարված է ծառայությունները բարեխիղճ մատուցելու՝ Կանոնագրքով նախատեսված պարտականությունը:

Ինչ վերաբերում է Փաստաբանի կողմից վճռաբեկ բողոք ներկայացնելու ժամկետը բաց թողնելու հանգամանքին, ապա, ինչպես արդեն վերևում հիմնավորվեց, Փաստաբանը զուտ պայմանագրով չի ստանձնել նման պարտավորություն, այսինքն՝ նման գործողության կատարումը դուրս է պայմանագրի առարկայի ծավալից:

Հանձնաժողովը գտնում է, որ վստահորդի շահերից էր բխում վճռաբեկ բողոք ներկայացնելը կամ էլ այդ մասով վստահորդի՝ բողոք չներկայացնելու դիրքորոշումը ճշտելը,

սակայն գործի նյութերում գտնվող պայմանագրի առարկայի ձևակերպումից, Հանձնաժողովը Փաստաբանի կողմից «վճռաբեկ բողոք բերելու» ծառայություն մատուցելու պարտականությունը վիճելի է համարում:

Օրենքի 39.1-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին*:

Սույն կարգապահական գործի փաստական հանգամանքները գնահատելով վերոգրյալ նորմերի վերլուծության համատեքստում՝ Հանձնաժողովը գտնում է, որ չփարատված կասկածների մեկնաբանմամբ Փաստաբանի կողմից Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտումը չի հիմնավորվում:

Կարգապահական տույժի ընտրությունը.

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները, ինչից ելնելով նրա նկատմամբ կիրառում է «նկատողություն» կարգապահական տույժը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 11.1-րդ հոդվածի 3–րդ մասի 1–ին կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.10.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 39.7-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Աբգար Բորիսի Պողոսյանի (արտոնագիր՝ թիվ 3015) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.6.1 և 3.8.4 ենթակետերի խախտման համար, իսկ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված վարույթը՝ կարճել:

2. Հանձնարարել Նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-23004-2-Ա
20 ապրիլի 2023թ.
ք.Երևան